

ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պուշկարիոյ համար  
 Տարեկան 12 Ֆր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արտասահմանի հա-  
 մար Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 Տր.  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԿԱՆՈՒԿՆԻՒՄ  
 Մանուցանել տողը առաջին  
 դրանին համար 40 սանթիմ  
 և իսկ վերջին երեսին հա-  
 մար 20 սանթիմ և երկին  
 անկի անգամներու համար  
 20 Օ) զեղը կրչայ :  
 Կառույթի համար՝ ձեռքի 10 սանթիմ

# ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalmencarian  
 (Autriche)  
 Mechitaristengasse W. 4  
 Vienne

«Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)  
 Պուշկարիոյ համար ձեռքի  
 (15 ՍԱՆԹԻՄ)  
 Պուշկարիոյ համար ձեռքի  
 (20 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՍԻՄԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԵՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՈՒԹՈՐ ՕՐԵՐԸ

## ԲԵՄԻՆ ՇՈՒՐՁԸ

Թանձր անհասկցողութիւն մը կարծես կը յամառի պատել մեր հասարակութեան մեծ մասին միտքը թատրոնը բմբուսելու կէտին մէջ :  
 Ակիւրէն ի վեր թիւրիմացութիւն մը, տեսակ մը նախապաշարում ունեցած ենք մենք թատրոնը չոր զբօսավայր մը, ժամանցի տեղ մը նկատելու, այն ալ ոչ պարկեշտ ժամանցի, այլ քիչ մը «ճահիլի» թեթեւ ժամանց, ուր այսինչ գերասանին շարժումներով զուարճանալու կամ այսինչ գերասանուհին նապէտ կոտորուքները վազազուտ հաճոյքով ըմբռնելու խենթ մարմալը մեր ջիւղերը կը լարէ : Միակ ներքի ներկայացումները որոնք մեր հասարակութեան գնահատումին արժանացած են, եւ ուրկէ տարօրինակէ՞ հաճոյք կը զգայան, խնդկատակութիւնները եզած են, միջին դարու ֆարսերուն անհամ ու ծիծաղելի նմանութիւնները որոնք տաճկական բարքերով նուիրագործուած են, ու շատ հինցած, շատ փոխուած տեսարաններ միայն կը պատկերացնեն : Անոնց քով մեր արդի ընտանեկան կամ ընկերական բարքերը կրնան խիստ նախանձելի երեկիւ և հանդիսատեսը տեսակ մը գոհունակութիւն կունենայ ինքզինքը աւելի կատարեալ, աւելի «քաղաքակիրթ» գտնելով, ու փոխելիք, պնտուցնելիք ոչինչ տեսնելով իրեն մէջ :  
 Ժամանակակից իրական կեանքը բեմին վրայ պատկերացնել անքաւելի ոճիւր է մեր հասարակութեան համար, անբարոյակա՞նութիւն «չափաւերութիւն» մը որով «ճահիլի»ները գլխէ կելլեն և սրիկայութեան ճամբաներ կը սորվին :  
 Այսպէս կը դատէ մեր հասարակութիւնը այն թատերգութիւնները, այն արամները, որոնց համար քաղաքակիրթ ոչ խարհը հոգի կուտայ, և որոնք ամէն օր եւրոպական թատրոններ

ընդ մէջ կը հաւաքեն ժողովրդին բոլոր դատակարգի, ամէն սեռի ու տարիքը մարդիկը, դափնիներ կը հիւսեն հեղինակներու և խաղացողներու գլխուն և մարդկութեան բարքերն ու սովորութիւնները վերիվայր կը յեղաշրջեն :  
 Մեր կեանքի ծիծաղելի երեւոյթներու վրայ խնդալ, մեր ամենօրեայ սխալները մեր աչքին առջեւ բեմ հանուած տեսնել, լսել այն տեսակ խօսքեր զորս ամէն սիրող սիրա կը կրկնէ իր տարփուհիին առջեւ ծնրադիր : այս ամէնքը կը զոյրացնեն զմեզ, տեսակ մը յիմար ամօթի նախապաշարում կը կարմրցնէ մեզի ու կը դատապարտենք թատրոնը, որովհետեւ չենք հասկցած զայն և սխալ գաղափարուած ենք թատրոնի գերի մասին :  
 Բայց թատրոնէն աւելի ու անխղճօրէն կը դատապարտենք գերասանները :  
 Մեզի համար պարագայ մնացած անպէտք, անօգուտ մարդիկ են ատենք, որոնք հացի փարա մը շահելու համար հասարակութիւնը զբօսցնելու կելլեն : Մեծ բարբարութիւն մը կատարած ըլլալու համար մը կունենանք, երբ երջանիկ օր մը բարեհաճինք այսինչ գերասանին ի նպատակը ուսած ներկայացումին տոմսակ մը գնել, որուն համար կը պահանջենք որ գերասանները յաւիտեան երախտապարտ մնան մեզի :  
 Մեր բարքերուն, մեր վատ ու անպիտան մոլութեանց սրբազրուութեան մէջ անոնց կատարած գերին զիտակցութիւնը չունինք ու տխարօրէն կը պնդենք թէ ձրի դրամ մը, բարեացակամ շնորհք մըն է մեր անոր տուածը : Այս պատճառաւ ալ մեր ընտանեկան ու ընկերական բարքերը ամենագանգաղ քայլերով միայն առաջ կելլան, չըսեմ լճացած ջուրի պէս անշարժ կը մնան ու քանկնաքաղցելու չափ կը ներսի ու կապականին :

Եւ բամբասելու իրաւունք ունենալ կը կարծենք, երբ գերասան մը քիչ մը շատ պոռայ, քիչ մը շատ համարձակ շարժի, քիչ մը շատ կոտորուի գերասանուհիին առջեւ :  
 Իսկ եթէ գերասանուհի մասին է մեր խորհրդածութիւնը, այն ատեն հաւատաքնութիւն մը պէտք կը ըլլայ իր ամբողջ արհաւիրքներով, որպէսզի կեանքի այդ հէք պատկերացնողը մեր աչքին առջեւ կարողանայ սրբանալ :  
 Լ. Ս.  
 (Շարունակելի)

**ՌՈՒՍԱԿԱՆ ԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ**  
 Յայտնի չէ թէ Չարը զէնընկեցութեան կամ խաղաղութեան համաժողովին հիմնաքարը դնելէ և Սիպերիոյ մէջ աքսորեալներ զրկելու օրէնքը դադարեցնել յետոյ ինչպէս կը վարուի իր յանցաւորներուն հետ, սակայն աս ճշմարիտ է որ անկից առաջ ռուս կառավարութիւնը այնքան անգութ եղած է որքան թուրքը :  
 Հետեւեալ նկարագրութիւնը զոր թարգմանաբար կը ներկայացնենք մեր ընթերցողներուն, ցոյց կուտայ թէ նիքոլա կայսրը որքա՞ն ամենօրումած և մարգասէր Չարը եղած է !!! :

Բեթերսպուրկի «Վրաչ» անուն բժշկական հանդէսին մէջ Տօքթ. Լօպալ Սիպերիոյ բանտերուն մէկ պատկերը կը ներկայացնէ : Տօքթ. Լօպալ Սաքալին կղզիին բանտերուն բժիշկն է, որ միանգամայն պաշտօնը ունի յայտարարելու թէ այս ինչ աքսորեալը կարող է տանիլ տրուած այսինչ պատիժները, այսինքն այսքան հարուած խարազանի կամ ցուպի եւայլն :  
 «Պարոն, կը խնդրեմ ձեռքեր հաճիք գտնուիլ այսինչ օրը իմ հսկողութեան յանձնուած բանտը, ներկայ գտնուելու համար պատիժներու գործադրութեանը : անհասարկ հրամանատարին պաշ-

տանկան հրաւերը զոր կուզէ բժիշկին :  
 Կը մանենք կէս մութ նրբանցքի մը մէջ որ Ալէքսանար բանտին մասը կը կազմէ : պատերը շուրջն սեւցած են և սուր հոտ մը մեր քթին մէջ կը խուսէ : Նրբանցքին մէկ ծայրը դրուած է սեղաններ և աթոռներ տեսարանին ներկայ գտնուողներուն համար, որոնք կը լլան գատախաղ մը, բանտին պետը և բժիշկ մը : միւս ծայրը փայտեղու խուրձ մը կայ որուն ետին սպառնալից աչքերով կապուած պատիժին գործադրիչը, դահիճը Այս վերջնոյն հազուատը ամէն բան կը բացատրէ, ճեմակ քարձր կեղծամ մը՝ գլխուն վրայ, ոտքերը անցուցած կակուղ կաշիէ կօշիկներ, արիւնի գոյն կարմիր շապիկ մը հագած, թեւերը վեր սթիտած և ձեռքը խարազան մը :  
 Պատին առաջ, մէկ կողմը, շարք մը յանցաւորներ կեցած են կիսամերկ ու ամիլուած պանկերով և գիմպը՝ պահապաններու շոկատ մը՝ վեցհարուածեանները ձեռքերին :  
 Գերեզմանային լուսութիւնը կատարեալ է և հազիւ կը խզուի շղթաներու և ձեռնակապերու յարուցած շոկներովը կամ բանտապետին առաջ դրուած թղթած բարին մէկ տերեւին գառնալովը :  
 «Որո՞ւ է կարգը» ահա հարցում մը որ անշուշտ և գաղտնի կերպով կը կարգացուի բոլոր պատժապարտներուն գէմքին վրայ, երբ յանկարծ պետը հանդարտ և չափուած ձայնով մը կը գոչէ՝ «Սիտօրօֆ» : : :  
 Սիտօրօֆ կը յառաջանայ յուսահատ, աղբարկու դիմագծերով և կթոտելու մօտ : Երթունքները կը գալկանան, աչքերը արցունքով կը լեցուին և : : :  
 «Պառկէ հոգ» կը հրահայէ պետը :  
 Սիտօրօֆ կը պառկի տախտակի մը վրայ և գործադրիչը, դահիճը երեւան եկած՝ կը կապէ զայն տախտակին զոր միանգամայն երկու թեւերուն մէջ առած է և յետոյ տախտակէն դուրս

դաստակներէն ալ կը կապեն  
«Քանի՞ հաս» կը հարցնէ հրա-  
կողը որ հարուածները համբ-  
լու պաշտօնն ալ ունի :

«Վաթառն» կը պատասխանէ  
պետը ինքնավստահութեամբ մը  
և յետոյ կ'աւելցնէ «ուշադրու-  
թիւն», այսինքն ըսել կուզէ  
թէ «մի մեռնէ՛ք», ա՛յսքան :

Խարազանը կելնէ կիջնայ շա-  
ջիւններ հանելով օդին մէջ եւ  
մերկ մարմնոյ վրայ : անոնց կը  
յոջորդեն խուլ, զսպուած հեծ-  
կլուտները խեղճ պատժապար-  
տին որուն գալարումները սիրտ  
կը պատուեն :

«Թրիթաթ» (երեսուն), «սո-  
րօք» (քառասուն) ահա ինչ  
որ կը լսուի իր կոտորակնե-  
րովը որոնց կընկերանան կա-  
պոյտացած մարմինէն ելած հաւն-  
գիւնները : հետզհետէ աւելի  
անորոշ և աւելի մեղմ շարունա-  
կութեամբ մը :

Տեսարանը կը կրկնուի միւս  
յանցապարտներուն համար ալ  
որոնք աչքովին կը տեսնեն ի-  
րենց նախորդին քաշածները  
ու ամէնքը մէկ կ'իսմեն իրենց  
տեղերը տանելէ յետոյ : դուրս  
կը նետուինք այդ խղզուելիք և  
խենդենալիք տեղէն :

(Շարունակելի)

### ԹՈՒՍԹՈՅԻ ՊԱՏՄԱՆԱՆԸ

Յայտնի է թէ Ռուսիոյ սինօզը  
Օրթոտոքս եկեղեցիէն վտարեց Լէոն  
Թուրթոյ կուսակցութեան հակակրօնական  
զգացումներուն համար եւ այս առ-  
թիւ ուսանողական խողովութիւններ  
իսկ ծաղեցան, որոնց պատճառաւ Ձա-  
րը խիստ միջոցներ ձեռք առնել

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԹՈՂՏՈՒՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Եթէ եւրոպական թերթերու հա-  
զորդած աեղեկութիւնները ման-  
րամասնութիւնները խոշորացոյցի  
ենթարկուած չեն ու եկեղեցի մէջ  
վերջերս երեւան եկած արարական  
խլորտները հետզհետէ ծանրակշիւ  
հանգամանք մը ստանան, թուրքիոյ  
բանաստեղծներ խալիֆայութիւնը իրա-  
կան և անխուսափելի վտանգի մը  
մէջ է :

Գիտնէք թէ Համիտ-էտ-տիւնը ինչ-  
պէս խալիֆա հռչակած են և իւրե-  
մաներու գաղտնի ընկերութիւնը Եր-  
քան ճիգեր կը թափէ կրօնական  
հերձուած մը ձգելու թուրքերուն և  
արաբերուն մէջ :

Անտարակոյս ասոնց ամենուն պատ-  
ճառը Սուլթան Համիտն է, ինչպէս  
վերջին 25 տարուան մէջ Թուրքիոյ  
և թուրքիացիներուն գլխուն եկած  
ամէն փորձանքներուն միակ պատ-  
ճառը : Պարագայ մը՝ որ մոտցուած  
պէտք չէ ըլլայ անշուշտ մտանի տեղ-  
եակ անձերու, կը հաստատէ թէ

ստիպուեցաւ թուրքիոյ մասին, որ  
Ռուսիոյ մէջ մեծ ժողովրդականու-  
թիւն կը վայելէ և ամէն բանիմաց  
անձերէ կը յարգուի :

Արդ կուս թուրքիոյ այսօր իր պա-  
տասխանը կուտայ սինօզի այդ պաշ-  
տօնական վճիռին և իր մտածումնե-  
րը և հաւատքը պարզելով, անգամ  
մը եւս կը հաստատէ թէ՛ որքան  
սխալ ըմբռնուած է ինք և կրօնա-  
մոլութիւնը որքան կը կուրցնէ եկե-  
ղեցոյ պաշտօնեաները :

Թուրթոյ այս հաւատամքը ձեռքէ  
ձեռք կը խլուի առև ուսանողու-  
թեան մէջ, որուն աւետարանը ըլլա-  
լու չի պիտի ուշանայ : Անոր մէկ  
քանի կտորները թարգմանելով կը  
հրատարակենք իրրեւ նմոյշ մը  
մտածումներուն այն մեծ իմաստա-  
սէրին որուն սկզբունքները վաղը  
մեր մէջն ալ գուցէ ծնունդ առնեն :  
Թուրթոյ կը գրէ .

«Ես ուրացայ այն եկեղեցիին որ  
ինքզինքը Օրթոտոքս կանուանէ,  
ասիկայ բացարձակապէս ճիշդ է .  
բայց Տէրջը դէմ ըմբոստացած ըլ-  
լալուս համար չէ որ ուրացայ եկե-  
ղեցին : այլ ընդհակառակը անոր հա-  
մար որ ուղեցի հոգևոյս բոլոր զօ-  
րութեամբը ծառայել Աստուծոյ :

Եկեղեցոյ ճշմարտութեան մասին  
կարգ մը տարակոյսներ յղացած ըլ-  
լալով, նախ պարտք սեպեցի քանի  
մը տարիներ զոհել անոր անսակաւ  
և գործնական ուսումնա իրա թեա-  
նը և յետոյ ուրանալ զայն ու  
խղուիլ ժողովուրդէ մը որուն կապ-  
ուած էի անձառելի սէրով մը :

Մէկ կողմանէ չանացի կարգալ  
ամէն ինչ որ յարաբերութիւն ունէր  
անոր ուսուցմանը և յարեցայ ծի-  
սական աստուածաբանութեան քննա-  
դատական ուսումնասիրութեանը .  
միւս կողմանէ, աւելի քան մէկ տա-  
րի, խղճմտօրէն համակերպեցայ եկե-  
ղեցիի բոլոր պատուիրաններուն  
պահելով ամէն ծոմերը ու ներկայ  
գտնուելով ամէն կրօնական արարու-  
ղութեանց, և հարողով գոյացուցի  
թէ եկեղեցիին ուսուցումը տեսակա-  
նօրէն, նենգաւոր և վնասակար

ստութիւն մըն է, իսկ գործնականու-  
րէն կոշտ աւելորդապաշտութիւննե-  
րու և վնասութեան խառնուրդ մը  
որոնց ներքեւ բացարձակապէս կան-  
հետանայ քրիստոնեայ վարդապետու-  
թեան ոգին :

Ահա այն ասին է որ իսկապէս ու-  
րացայ եկեղեցին, զաղբեցայ գոր-  
ծադրելէ անոր ձեւերը ու կտակիս  
մէջ յանձնարարեցի շուրջիններուս  
որ երբ մեռնիմ, եկեղեցոյ ոչ մէկ  
պաշտօնեան քովս մտեցնեն և կարե-  
լի եղածին չափ աներեւութացնեն  
դիակս, ինչպէս կընեն զգուելի և  
անօգուտ բանի մը համար, որպէսզի  
ողջ մնացողներուն նեղութիւն տա-  
լու պատճառ չըլլայ :

Կը հաւատամ Աստուծոյ որ ինձ  
համար ամէն բանի Ոգին, Սէրը և  
Սկզբունքն է, կը հաւատամ որ ին-  
քը մէջս է ինչպէս ես իր մէջն եմ,  
կը հաւատամ որ Աստուծոյ կամքը  
երբէք այնքան յստակ և պարզ  
կերպով բացատրուած չէ որքան  
Մարգ-Քրիստոսի վարդապետութեան  
մէջ : Բայց կարելի չէ Քրիստոսը իր-  
րեւ Աստուած նկատել և անոր ուղ-  
ղել աղօթքներ, իմ կարծիքովս : ա-  
ռանց ամենածանր սրբապղծութիւնը  
գործած ըլլալու : կը հաւատամ որ  
մարդուն ճշմարիտ երկնակուսութիւնը  
կը կայանայ Աստուծոյ կամքը կա-  
տարելուն մէջ : կը հաւատամ որ Աս-  
տուծոյ կամքն է ի՛նչ ամէն մարդ  
պէտք է սիրէ իր նմանները և միշտ  
ուրիշներուն հանդէպ վարուի այն-  
պէս ինչպէս կը փափաքի որ ուրիշնե-  
րը վարուին իրեն հանդէպ : ահա ինչ  
որ կըսէ Աւետարանը և որ իր մէջ  
կը բովանդակէ բոլոր օրէնքը և  
մարգարէները : կը հաւատամ որ ա-  
մէն մէկերնուս համար կեանքի նպա-  
տակն է միմիայն սէրը աճեցնել իր  
մէջ, կը հաւատամ որ մեր սիրելու  
կարողութեան այս զարգացումը մե-  
զի պիտի պարզուէ այս կեանքին  
մէջ, երկնակուսութիւն մը որ ամեն օր  
պիտի մեծնայ և հանդերձային մէջ  
երանութիւն մը անոր համար մա-  
նաւանդ կատարեալ, վասնզի մենք  
ստրուած պիտի ըլլանք աւելի սի-  
րելի :

Սննդի կարգի սիրելի քրիստոնէու-  
թիւնը ճշմարտութիւնէ աւելի, շատ  
չանցած պիտի մղուի սիրելի իր դա-  
ւանները և իր եկեղեցիին քրիստո-  
նէութեանէն աւելի ու վերջ ի վերջոյ  
պիտի սիրէ իր իսկ անձը (իր հան-  
գիտքը) աւելի քան ուրիշ քան աչ-  
խարհի մէջ :

Ես բոլորովին հակառակ կողմէն  
անցայ այս վտելբուն մէջէն, որոնց  
վրայ կը խօսի Քրիստոս :  
Նախ ևկտայ սիրելի Օրթոտոքս ե-  
կեղեցիին իմ հանգստութեանէն աւելի,  
յետոյ սիրեցի քրիստոնէութիւնը և  
աւելի քան Օրթոտոքս եկեղեցիին և  
հիմա աշխարհայ մէջ ամէն բանէ  
աւելի ճշմարտութիւնը կը սիրեմ :  
Բայց մինչև հիմա ես ճշմարտութիւ-  
նը չիմտեցի քրիստոնէութեան հետ  
այնպէս ինչպէս ես կըմբռնեմ զայն :

Սուլթան Համիտ որքան արժանի էր  
այս սրապուղուներուն և անկու-  
մին որոնց կենթարկուի, քանի՛ լրա-  
գրները և հեռագրերը կը հա-  
զորդեն նորանոր յաջողութիւններ և  
տարածումը իր խալիֆայութեան գէմ  
լարուած դաւերուն :

Երբ 1895ի ծրագիրը կը մատուց-  
ուի Սուլթանին որ ստորագրէ,  
անգլիական դեսպան Մ. Քըրրի Ապ-  
տիւլ Համիտի կը ներկայանայ և կը  
զգացնէ անոր թէ փրկութեան միակ  
ճամբան այդ ծրագիրը ընդունիլ ու  
գործադրելն է : Ապտիւլ Համիտ երբ  
գիտնալ կուզէ անգլիական դեսպա-  
նէն թէ այդ ծրագիրը մերժելով կամ  
ստորագրելէ յետոյ չի գործադրելով  
ինչ կրնայ ըլլալ, այն ստեղծ Մ.  
Քըրրի կը պատասխանէ «Այդ ծրա-  
գիրը պէտք է ստորագրէք և ո՛չ  
միայն ստորագրէք այլ և գործադ-  
րէք, ապա թէ ոչ խալիֆայութիւննիդ  
վտանգի տակ կ'իյնայ» : Յայտնի է  
թէ այդ ծրագիրը ինչ կերպով գոր-  
ծադրուեցաւ և արեան յորդանոս հե-  
ղից մը ինչպէս բարենորոգեց Հա-  
յաստանը անոր տղեւ ծրագրի պէտ-  
քը չի ձգելու աստիճան : Այնուհետեւ  
Քըրրի փոխադրուեցաւ Հառլով և տա-  
րիներէ յետոյ, անշուշտ այսօր, Իտա-  
լիան կը տեսնայ թէ ինչպէս իր

մարգարէութիւնները իրականանա-  
լու վրայ են և Անգլիան որքան  
գիտէ իր խօսքը պահել ու պառնա-  
լիքները ուշ կամ կանուխ գործադ-  
րել, օկանջ չի կախելով առև թեր-  
թերուն որոնք բացէ ի բաց և նախ  
մասնաճիւղ կընեն եկեղեցիի ապստամ-  
բութեան իրրեւ միակ գրգռիչը և կը  
պահանջեն արգիւել զայն :

Ուր էր թէ Անգլիա այնքան յա-  
ջողէր եկեղեցի մէջ որքան Ռուսիա չի  
յաջողեցաւ Չինաստանի մէջ . . .

Թողունք Անգլիան և Ռուսիան  
ու մենք գառնանք մեզի :

Ժամանակէ մը ի վեր Պուլկարիան  
և Ռուսիան հայ առաջնորդով  
մը օժտելու խօսքերը կը պարտին,  
այս մասին թեր ու գէմ կարծիքներ  
փոխանակուեցան ու մինչև իսկ ա-  
ռաջնորդին անունն ալ ծանուցուե-  
ցաւ :

Թէ պուլկարացիները և ուսմանա-  
հայերը պէտք ունին առաջնորդի  
մեր կարծիքով պատասխանը հաստա-  
տական է : Բայց թէ այդ հայերը ի-  
րենց ներկայ վիճակով արժանիք են  
առաջնորդի մը, մանաւանդ Արշա-  
րունի Յովհաննէս եպիսկոպոսի

կը հաւատամ նաեւ որ սիրոյ այս  
աճումը, ուրիշ ուրիշ գորութիւն-  
ներէ աւելի, պիտի նպաստէ հիմնա-  
լու երկրի վրայ Աստուծոյ թա-  
գաւորութիւնը, այսինքն հերձուա-  
ծով, ստութիւնով և բունութիւնով  
կազմակերպուած կեանքին տեղ զննել  
նոր կարգ մը ուր տիրեն համաձայ-  
նութիւնը, ճշմարտութիւնը և եղ-  
բայրութիւնը :

Կը հաւատամ որ սիրոյ մէջ յա-  
ռաջիմեւեւ համար մէկ միջոց մը  
ունինք, այն է աղօթքը : բայց ոչ  
հրապարակային աղօթքը, առաջնե-  
րու մէջ, զոր Քրիստոս բացէ ի բաց  
միտքեց (Մատթ. զլ. 2. 5-13) այլ  
այն աղօթքը որուն օրինակը ինք  
անձամբ տուաւ մեզի, առանձնապի-  
պօթքը՝ որ է մեր մէջ վերահաստատու-  
ել և ամբապնդել մեր կեանքի նպա-  
տակին գիտակցութիւնը և այն  
զգացումը՝ որով կախում ունինք մի-  
միայն Աստուծոյ կամքէն :

Գալով վարդապետութեանց վերա-  
դառնալու խնդրոյն, որոնցմէ ինք  
զինքս սգաապրեցի ի զին այնքան  
չարչարանքներու, ասիկա ալ չեմ  
կրնար ընել : Թողունք որ իր թոխը  
տաւ, այլևս չպիտի մտնայ հաւելի-  
թիւն կենցախ մէջ ուսկից դուրս ելած  
կը :

Այն որ կսկսի սիրել քրիստոնէու-  
թիւնը ճշմարտութիւնէ աւելի, շատ  
չանցած պիտի մղուի սիրելի իր դա-  
ւանները և իր եկեղեցիին քրիստո-  
նէութեանէն աւելի ու վերջ ի վերջոյ  
պիտի սիրէ իր իսկ անձը (իր հան-  
գիտքը) աւելի քան ուրիշ քան աչ-  
խարհի մէջ :

Ես բոլորովին հակառակ կողմէն  
անցայ այս վտելբուն մէջէն, որոնց  
վրայ կը խօսի Քրիստոս :  
Նախ ևկտայ սիրելի Օրթոտոքս ե-  
կեղեցիին իմ հանգստութեանէն աւելի,  
յետոյ սիրեցի քրիստոնէութիւնը և  
աւելի քան Օրթոտոքս եկեղեցիին և  
հիմա աշխարհայ մէջ ամէն բանէ  
աւելի ճշմարտութիւնը կը սիրեմ :  
Բայց մինչև հիմա ես ճշմարտութիւ-  
նը չիմտեցի քրիստոնէութեան հետ  
այնպէս ինչպէս ես կըմբռնեմ զայն :



օգտակար ձեռնարկի մը իրեն պատճառած ծանրութիւնը, ընկերոջ, Շաւարշի յանկարծական մահը և ուսումներու շարունակութիւնը, որ բարեհաճին քանի մը ամսուան արձակուրդ շնորհել իրեն, խօստանալով ատոր փոխարէն Բ. շրջանին «Համալսարան»-ը դարձնել աւելի ճոխ, զայն զարգարելով բազմակողմանի նիւթերով:

Բաժանորդները պէտք է իմացնեն թէ Բ. շրջանի համար ալ կը փափագին բաժանորդ մնալ, որուն սկզբաօրով թիւը մասնաւոր շրջաբերականներով պիտի յայտարարուի «Համալսարան»-ի գործակալներուն, մամուլին և մնացող բաժանորդներուն:

— Մշակի մէջ կը կարգանք թէ Պարսկաստանի նորընտիր առաջնորդ Արիստակէս եպիսկոպոս Սեդրաքեան հրաժարեր է այդ պաշտօնը ընդունելէ: Իր միաձայն ընտրութեան հետագիւրը ստանալուն պէս, Արիստակէս եպիսկոպոս հեռագրով յայտներ է Սահակ եպիսկոպոսին այդ պաշտօնէն հրաժարումը և միևնոյն ժամանակ իր հրաժարականը ներկայացուցեր է հայոց կաթողիկոսին:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռ Ո Ւ Ր Ք Ի Ս

Օտար թղթատարութեանց խնդիրը թէ և վերջնականապէս չէ շտկուած, բայց իրաց առջի վիճակը վերահաստատած է: Օսմ. թղթատարութեան տեսուչը պաշտօնապէս հաղորդած է զայս օտար թղթատարութեանց վարչներուն:

Դեսպանները իրենց տէրութիւններէն հրահանգի կսպասեն, որովհետեւ Բ. Դուար կը շարունակէ օտար թղթատարութեանց շնչումը պահանջել:

Օտար թղթատարութեանց վարչները իրենց դեսպաններուն յանձնարարած են հետեւեալ պահանջներն ընել:

1. Էքսպրէսով եկող սուրհանգակը պէտք է յանձնուի երկաթուղւոյ պաշտօնեաներուն:
2. Քօնվասիօնէլ կառայութեանով եկող սուրհանգակները առանձին վակոնի մէջ պէտք է պահուին, մասնաւոր պաշտօնեայի մը պատասխանատուութեան տակ:
3. Մասնաւոր սուրհանգակներ զրկուելուն պատճառաւ յառաջ եկած արտակարգ ծախքը վար պիտի դուրս ածուին մէջ նամակներու փոխադրութեան համար օսմ. թղթատ. վարչութեան մօտ իրենց ունեցած պարտքէն:

— Օսմ. թղթատ. վարչութեան տնօրէնն որ շրջաբերական մը զրկեր է, որով կը յայտարարէ թէ օտար սուրհանգակները ըստ աւանդոյն թուրք պաշտօնեաներու հսկողութեամբ պիտի զըրկուին մինչև որ օտար փոստաներու անկախութեան հարցը վճռուի:

Օտար փոստաներու վարչները նկատի չի պիտի առնեն այս շրջաբերականը և կրկին մասնաւոր պաշտօնեայ մը պիտի զրկեն իրենց փոստաներու հետ, ինչպէս կընեն վէճին ծագելէն ի վեր:

— Անցեալ կիրակի արտաքին գործոց նախարարը դեսպաններուն այցելելով հաղորդած է թէ Սուլթանը համակիր չէ օտար թղթատարութեանց դէմ բոլոր պատահածներուն և հրամաններ տուած է, որպէսզի անոնք ըստ աւանդոյն շարունակեն իրենց գործերը ազատօրէն: Աւստրիական փրանսական և Անգլիական դեսպանները յայտարարեր են նախարարին թէ, թղթատարութեանց խնդիրը իրենց կառավարութեան ձեռքը անցած ըլլալուն, չեն կրնար անոր վրայ վիճել և Սուլթանին յայտարարութիւնը իրենց կառավարութիւններուն չի պիտի հաղորդեն: Գերմանիա ընդունեց նախարարին յայտարարութիւնը և խնդիրը փակուած համարեց:

Բոլոր դեսպանները իրենց պետութիւններէն հրահանգներ ստացած ըլլալով թարապիտի մէջ հաւաքուեր են վերջնական որոշում մը տալու համար:

— Իրէվէզի մէջ թրպոլիտը Պօլիս պիտի բերուի և հոն պիտի քննուի իր ձեռքակալման խնդիրը Բ. Դրան և յունաց պարտիարքարանի կողմէ:

— Սուլթանին դէմ լարուած երեւակայական դաւադրութիւնը իզլէթ պէյի կողմանէ երեւան հանուելէն յետոյ Ապտուլ Համիտ այլևս հարկ չտեսներ եղբ օտար նամակատուները փակելու խնդիրը մտոր փաթտել, ընդհակառակը խնդրել տուեր է դեսպաններուն որ մոռնան այդ միջադէպը խօստանալով որ նամակատուները այսուհետեւ պիտի շարունակեն առանց խաչընդոտներու:

Դեսպանները զոհ չեն մնացած իրենց նօթախի փոխարէն Սուլթանին տուած այս պատասխանէն և հաւաքուեր են Աւստրիոյ դեսպանատունը խնդիրը քննելու համար սակայն Գերմանիոյ դեսպանը տրամադիր կերեւայ զոհանալու Սուլթանին այս խօստումովը:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Նախարարաց խորհուրդը համաձայնեց է պատերազմական նախարարութեան պիւտճէին վերայ որ 21 միլիոնի կը հասնի, և որ անցեալ տարուան պիւտճէէն քիչ մը աւելի բարձր է:

Մակ. հրացանաձիգ ընկերութիւնը ամսոյս 13 ին ժողով պիտի կազմէ, որպէսզի որոշում մը տայ ընկերութիւնը օրինական կազմակերպութեան մը վերածելու համար կառավարութեան տուած խօստումին մասին:

Ս Ե Ր Պ Ի Ս

Հանգուցեալ թագաւոր Միլանի սպաննութեան դատին մէջ, ոճրագործ Քաձէվիչի հետ միակամրատանեալ անձը, արմատական երեսփոխան Բանքօ Թէզիչ որ Մօնթէնէկրօ պատասխանած էր, Ալէքսանտր թագաւորին ներման արժանացած է, ինչպէս որ այս վերջին խոստացած էր դահաժառանգի մը ծննդեան օրն իսկ:

— Սերպիոյ թագուհին անձնասպանութեան փորձ մը կատարեր է երբ իմացեր է թէ գահաժառանգ մը ունենալու վիճակին մէջ չէ և թէ չկրնար այսուհետեւ զաւակ ունենալ: Պալատան բժիշկը անմիջապէս հասեր և փոխեցուցիչով մը ազատեց է թագուհին: Սերպիոյ մէջ մեծ յուզում կը տիրէ այս դէպքերուն հետեւանօք և կը վախցուի թէ յեղափոխութիւն մը կը ծագի ու Ալէքսանտր թագաւորը գահընկէց ընելու փորձեր կըլլան: Չինուորական խիստ հակոթութիւն կը կատարուի մէջ կողմ, մանաւանդ Գարաբօրկէվիչի կուսակիցներուն վրայ:

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Յայտնի է թէ ռուս կառավարութիւնը ամբողջովին իր սահմանները փակեց Աւստրիացի կամ Գերմանացի ծագումով բոլոր հրէայ վաճառականներու առջեւ, որոնք Վիէննայի և Պէրլինի ռուս դեսպաններու վիզէն կրող անցագրեր չունին: Այս որոշումին հետեւանքով վերին Սիլեզիոյ և Կալիսիոյ վաճառականութեան մէկ քանի ճիւղերը ամբողջովին խանգարուած են:

Այս որոշումը, որ վարչաւիտի նոր կառավարիչն կը բղբի, պրոպագանդա ռուս-գերմանական սահմանագիծին վրայ օր աւուր շատցող մաքսանենցութեան առաջին անգամը նպատակաւ, Լեհաստանի հրէայ վաճառականները մեծապէս վնասուած են այս միջոցներէն:

Աւստրիոյ և Գերմանիոյ առեւտրական սենեակները իրենց պետութեանց արտաքին գործոց նախարարներուն միջամտութիւնը կը պահանջեն ռուս կառավարութեանէն այս որոշումը ետ առնել խնդրելու համար:

Քրաքովիան ֆրանսական ռուսաբէլո թերթին կը գրեն թէ պաշտօնական անձ մը որ վերջերս Բեթերսպուրկէն վերադարձած է,

կը յայտարարէ թէ Չարը Ռիտուելի Ռուսիան օժտել սահմանագրութիւնով մը: Նիքոլայ կայսրուհի է տեսնել Լոռիս Մէլիքօֆի պատրաստած սահմանագրութեան ծրագիրը որուն գործագրութիւնը յետաձգուած էր Ալէքսանտր Բ. ի մահուամբը:

Փ Ո Ւ Ր Ա Ս Ի Ս

Լօրտ Գրամիսօրն երեսփոխանաց ժողովին մէջ իրեն կողմ հարցումի մը պատասխանելով յայտներ է թէ Մարաշի անոյ չի պատուը հեռագրած է որ 10,000 քրիտեր Պիարիս լեռնարշաւած են տեղւոյն քրիտներէն: Չարը Չարգելու նպատակաւ 15 հոգի արգէն սպաննուած են:

Պօլսոյ Անգլ. դեսպանը խնդրել է Դրան ուշագրութեան յանձնած է, եւ կըրուի թէ վճարական հրահանգներ զրկուած են ամէն անկարգութիւն արդիւնք համար: Թուրք կառավարութիւնը դեսպանի հասկացուցած է որ տեղւոյն ազգաբնակչութեան մէջ երկար ժամանակէ հետեւ վէճեր գոյութիւն ունին, որոնց հետեւանքով արիւնալից ընտհարումներ տեղի կուրենան:

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Ժէնէրալ Վալտէրգէլի մեկնումը ստուգուած է. նախ ճարտն պիտի երթայ Միքատիոն հետ տեսակցելու, կը յուսուցուի թէ իր մէկնումէն առաջ տուգանքի խընդիրը պիտի կարգադրուի:

«Թամպլ» թօքթի թղթակիցը կիմանայ թէ ռուսական դեսպանը առաջարկած է Լիհուկ-Չանկին Ռուսիոյ երաշխաւորել տալ տուգանքին ամբողջութիւնը, փոխարէն կարևոր քաղաքական զիջումներ ընելով անոր: Լիհուկ-Չանկ պատասխաներ է թէ այս իմաստով առաջարկութիւն մը ներկայ պարագային մէջ կրնար գէշ մեկնութեանց տեղի տալ: Ռուսիա անշատ ձեռնարկ մը ըրած կըլլայ փոխառութեան հսկելու համար:

Ն Ա Մ Ա Կ Ա Ս Ո Ւ Փ

Պուրէշ, Տ. Մարկ. — Չերթերթերը մինչև ցարգ կանոնաւորապէս զրկուած ենք, կիւղրուի որ դուք ալ հետաքրքրուիք շրտանալնուդ պատճառներով:

— «Որչալոյս» եզրկատու. — Չերթերթերն ալ սկզբէն ի վեր կանոնաւորապէս կը զրկուին:

— Յ. Մարգ. ձուրճովա. — Արգէն սկսած ենք ձեր փափագին համեմատ ամէն մէկ թիւ առանձին զրկել: Սովորական բաժնեգրինէն երկու ֆրանք աւելի պիտի վճարէք աւելորդ փոստի ծախքին համար:

«Քանի մը հայեր կը հարցնեն Պ. Կրօն Միքայէլեանի թէ իր նախկին վարժարանին ուսանողներուն «փոխադարձ օգնութիւն» անունով աշակերտական ընկերութեան սնտուկէն վերցուցած գումարը, մօտ 18 ուկր, ի՞նչ բանի գործածած է:

Отговорникъ:  
Д-ръ МѢГЖРДИЧЪ ВАРГАНЪ